ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՍՈՒՍԱՆՆԱ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Մելիքյան,

ի պատասխան Ձեր 02.12.2025թ. հ. 264-2025թ. գրության՝ տեղեկացվում է.

2017 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների մատուցման Վարձակալության պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում Ջրային կոմիտեն՝ որպես Վարձատու և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն՝ որպես Վարձակալ: Ներկայացված խնդրի կարգավորումը գտնվում է Ջրային կոմիտեի, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և/կամ սեփականատերերի (շենքը սպասարկող լիազոր մարմնի) պատասխանատվության ներքո:

Երևանի քաղաքապետարանի 2025թ. ծրագրերով Շիրակի փողոց հ.8 շենքի արտաքին կոյուղատար համակարգի վերակառուցման աշխատանքներ նախատեսված չեն: Այնուամենայնիվ, հաշվի առնելով հարցի կարևորությունը, 2026թ.-ի համապատասխան ծրագրերի առկայության դեպքում կքննարկվի նշված հասցեի արտաքին կոյուղատար համակարգի վերակառուցման աշխատանքների կատարման հնարավորությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ